ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ԿԵՍԱՐԻԱՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

**ПЕСПУБЛИКА АРМЕНИЯ**
**АРМАВИРСКИЙ МАРЗ**
**МУНИЦИПАЛИТЕТ**
**С. НОР КЕСАРИЯ**

---

13 հունիսի 2011թ N 22

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*

*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ*

*ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ*

Ձեզ է ներկայացվում ՀՀ Արմավիրի մարզի Նոր Կեսարիա համայնքի ավագանու 06.05.2011թ. թիվ 2-Ն որոշումը:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Հ. ՄԵՐՈՔՅԱՆ*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 6053-11
«13» 06 2011 թ.

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿԵՍԱՐԻԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

---

06.05.2011թ. 2-Ն

## <<ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՎՐԱ ԱԿՏԻՎ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N 92-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2011 թվականի մայիսի 12-ի թիվ 01/11/1455-11 գրությունը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Կեսարիայի գյուղական համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ հակակարկտային կայան տեղադրելու վերաբերյալ.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Կեսարիայի գյուղական համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել <<Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն հավելվածի:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին /Հ. Սերոբյանին/ օրենքով սահմանված կարգով իրականացնելու իրավական գործառույթներ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

Գ. Բաղդասարյան ____________

Ա. Ռասոյան ____________

Վ. Հայրապետյան ____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ Հ. ՍԵՐՈԲՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Նոր Կեսարիայի համայնքի ավագանու
2011 թվականի մայիսի 20 -ի թիվ 2-Ն որոշման

# ՑԱՆԿ

## ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ

| Հ/Հ | Հողամասի ծածկագիրը | Հողամասի մակերեսը /քմ/ | Սեփականատերը | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Ծանոթություն /եթե քաղաքացի է՝ անուն,ազգանունը/ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | | 72 | Նոր Կեսարիայի համայնք | Գյուղ. ն2 | այլ | |
| 2. | | 72 | Նոր Կեսարիայի համայնք | Գյուղ. Ն2. | այլ | |
| 3. | | | | | | |